

ՄԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

ՄԻՆԵՐԱՏ ԹԻՐԵԱԲՅԱՆ (նյութ-ձուգ)

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1962 թ. թիվ 3-ի մեջ Ա. Մ. Մինասյանը քննական ուսումնասիրություն մը հրատարակած էր «Սաադիի «Եոլեսարան»-ի հայերեն քարգմանությունները» վերնագրով, որուն կուզեմ անդրադառնալ աներկա դրությամբ։

Նպատակս է հերքել այն քննադատությունները, որոնք եղած են այնտեղ հանդուցյալ հորս՝ տոքթ. Հարություն Խան Թիրևաքյանի «Կոլեստան»-ի թարգմանության մասին։

Մինասյան թեև նկատի առած է Սաադիի առնա՝ երկին հայերեն զանազան թարգմանությունները, գլխավորաբար երկու ամբողջականները, ես իմ բներիցս պիտի սահմանափակեմ միայն հորս թարգմանության, զորժ չունենալով մյուսներուն հետ։

1. Մինասյան գիտել կուտայ, թե «Կոլեսթան»-ի հայերեն թարգմանությունների մեջ նկատելի են մի շարք շեղումներ, որոնք այս կամ այն չափով ձիշտ չեն վերարտադրում հեղինակի արտահայտած միտքը»։ Եվ ըստ իրեն այնպիսի շեղում մը եղած է Թիրևաքյանին թարգմանած սա տողերուն մեջ.

Բնչ է լեզուն ինչոք մարդու բերին մեջ.

Բանձարանի դրան իմաստնույն մի կրդականք։

«Ընդհանուր առմամբ ճիշտ է», կրսե քննադատը, բայց կավելցնե՝ «միայն Բելիդ (Բանալի) բառը թարգմանած է «կրդականք», մինչդեռ կրդանքը ղոֆլ է»։ Միծաղելի պիտի ըլլար իրավեն բոսն մը իսկ մտքե անցընել, որ Թիրևաքյանի նման արեւելյան լեզուներու հմուտ մեկը չէր գիտեր, թե կրդանքին պարսկերէնը ղոֆլ է, այնքան պարզ բան մը։ Սակայն Մինասյան չէ նկատեր որ բնագիրը այնտեղ չափածո է, նմանապես թարգմանությունը, և հետեւաբար չափի և հանդի համար է որ «կրդականք» թարգմանած է, ինչպես կտեսնվի վերի երկտողին հաջորդող սա խոսքերուն մեջ.

Քանի որ փակ կը մընա դուռն Դ՛վ գիտե

Սին ուրունքներ կը ծախե թե զոհար թանկ։

Այդքան փոքրիկ շեղում մը կարծեմ ներելի է տաղաչափյալ թարգմանության մեջ, մանավանդ որ ղգալի փոփոխություն չէ եղած իմաստի տեսակետեն՝ քանի որ կրդանքը բանալին կծառայե և բանալին ալ՝ կրդանքին։ Չէ՞ որ երկուքը միասին կգործեն դուռը բանալու և կրպելու համար։ Ավելցնեմ նաեւ, որ Բելիդ-ը բանալի թարգմանված է այս գրքին մեջ ուր որ ղրվածքը արձակ է, օրինակ՝ Բելիդ-ը ղերհայ-ը բէսրէ,—դոց ղռներու բանալին (թարգմ., էջ 121)։

2. Միջնասյանի հետևյալ դիտողությունը բնավ չարդարանար՝ գեթ Ռիթմայանի թարգմանության վերաբերմամբ, ահավասիկ իր խոսքերը. «Գոլեսթան»-ի թարգմանիչների մոտ տեղ են գտել բազմաթիվ ավելորդ նախադասություններ ու բառեր, որոնց առկայությունը ոչնչով չի նպաստում թարգմանական տեխնիկային կամ արվեստին, նույնիսկ ավելի ձգձգում ու խճողում է միտքը: Արդարացի հավելում մը, սակայն, կցված է այս մեղադրանքին սա բառերով. «Անշուշտ, բանաստեղծության փոխադրումը մի այլ լեզվի իրավունք է տալիս թարգմանիչին հարկ եղած դեպքում կատարել նաև հավելումներ, խնչպես և որոշ փոփոխումներ, սակայն ոչ իմաստից հեռանալու շափ, և կամ ձգձգել ու ճապաղել այնքան, որ երբեմն կեսը կամ կեսից ավելին լինի ոչ թե հեղինակինը, այլ թարգմանիչին: Եթե բանաստեղծական տողերում հաճախ այդ արվում է չափի պահպանման նպատակով, ապա արձակ հատվածներում այդպիսի մոտեցումը ոչնչով չի հիմնավորվում»:

Ու բերած օրինակներեն մեկը հետևյալն է.

Կոլ-ո խոյրույ դէր հեմմամ բուզի
Բէսիտ էզ պաստ-ը մեհրուրի բեղաստեմ:

Այս տողերը Ռիթմայանը թարգմանած է.

Ախորժարույր կավի կըտոր մ'ինձ մի օր
Բաղնիքի մեջ մատույց սիրուն մի էակ.

«Այստեղ մեհրուր-ը դարձել է «սիրուն մի էակ», — կըսե Միջնասյան: «Դարձել է» կնշանակե այլափոխվել է, նոր ձև առել է, բայց իրոք այդպես է: Քանի որ մեհրուր հայտնի «սիրելի» բառն է, ուրեմն «սիրուն» կամ «սիրուն մի էակ» սխալ է ըստ իրեն: Բայց շնորհալի քննադատը միթե չէ՞ր գիտեր, թե «սիրուն» կնշանակե նաև «սիրելի», իր «դուրեկան, հաճոյական» ընդհանուր իմաստէն դուրս: Դժվար չէր ստուգել այդ, թե որ բանար հին թե նոր հայերենի բառարանները: Նկատելի է, որ այս ուռնաավորին մեջ ալ չափածոյի պայմաններն են ձևակերպած թարգմանության կառուցվածքը, համաձայն թարգմանիչի գեղագիտական ճաշակին: Այլ հիմնապես շեղում չկա Սաադիի դիտումեն. գնենք այստեղ ամբողջական տողերը.

Ախորժարույր կավի կըտոր մ'ինձ մի օր
Բաղնիքի մեջ մատույց սիրուն մի էակ.
Ըսի—Մո՛ւշկ ես դո: Թե ամպար, ո՛վ դու, որ
Քո հիազմայլ հոտեն ես կամ սըխալակ:

Ուստի «սիրուն մի էակ» և «սիրելի» նույնիմաստ ըլլալով բնավ տեղի չկար «դարձել է»-ի կամ մեջ բերված իր վերի դիտողություններուն: Հակասակա՞ն է նույնիսկ, քանի որ ինքը կընդունի, թե «բանաստեղծության փոխադրումը մի այլ լեզվի իրավունք է տալիս թարգմանիչին հարկ եղած դեպքում կատարել նաև հավելումներ, խնչպես և որոշ փոփոխումներ, սակայն ոչ իմաստից հեռանալու շափ...»: Եվ այս պարագային բնավ իմաստեն հեռացում չէ եղած:

3. Միջնասյան «անտեղի և ավելորդ հավելումներ» կտեսնա նաև Ռիթմայանի հետևյալ թարգմանության մեջ (էջ 208). «Ստորին մարդիկ, երբ կտեսնեն, որ չեն կարող արժանիքով մրցիլ խելքի, տաղանդի տեր մարդոց հետ,

կջանան Բամբասել, անվանարկել»։ Իր բառերով՝ «Այստեղ ընդգծված կրկնակի հոմանիշներից մեկականն ավելորդ է և անտեղի»։

Նախ որ խելք և տաղանդ հոմանիշ բառեր չեն, մեկը կրնա խելացի ըլլալ առանց տաղանդ ունենալու։ Երկրորդ՝ այդ երկու բառերը հանված են պարսկերեն հոսեթ-ին դիմաց, իսկ հոսեթ-ը միայն մեկ իմաստ չունի, այլ տեղի համեմատ կնշանակե արվեստ, վարպետություն, հնարամտություն, խելք, տաղանդ, հանճար, կարողություն։ Թիրեաքյան հստակ և ուժգին կերպով արտահայտած է Սաադիին միտքը՝ թարգմանելով «արժանիքով մրցիլ խելքի, տաղանդի տեր մարդոց հետ»։ Այստեղ հոսեթ-ը կպահանջե «խելք, տաղանդ» միացած, արդյունքում «ավելորդ և անտեղի» ոչինչ կա։ Գալով «Բամբասել, անվանարկել»-ին՝ այս զույգ բառերը կհամապատասխանեն պրակ. բնագրին, ուր կկարդանք «բէջօնբէշ դէր փութիւն օփրէղ»։ «Դէր փութիւն օփրաղէն» պրակ. ոճ մըն է, որ կնշանակե ճիշտ ու ճիշտ «Բամբասել, անվանարկել», ուստի և թարգմանության մեջ գործածված երկու բառերն մեկը կամ մյուսը ոչ «ավելորդ» է և ոչ «անտեղի»։

«Ավելորդ և անտեղի հավելումներու» օրինակներու կարգին Մինասյան մատնանիշ ըրած է Թիրեաքյանի թարգմանության էջ 26-ը, բայց թե ո՞ր բառը կամ բառերն են, չէ ըսած, ուրեմն ինչու և այդ էջը հիշել։

Հետո կուգա սա տողին (էջ 29) «...ենվ ամեն հնարք նյութեցին, բայց իզուր, սպաննել տալու անի»։ Որուն համար Մինասյան՝ թույլ տա ինձ ըսելու, զարմանալի ինքնավստահությամբ կհայտարարե. «Այս նախադասությունն ամբողջությամբ ավելորդ է դրված և այլն»։ Կրնա ըլլալ, որ Մինասյանին ունեցած օրինակներուն մեջ պակսին հիշյալ տողերը, բայց այդ պարագան իրավունք կուտա՝ քննադատի մը հախուռն կերպով հայտարարելու, թե թարգմանչին կողմն «հավելում» եղած է, իսկ «և այլն»-ի իմաստը չհասկցա, ի՞նչ ըսել ուզված է անորոշ «և այլն»-ով։ Ձգուշավոր ուսումնասիրող մը առնվազն պիտի ավելցներ վերի դիտողության սապիսի խոսք մը՝ «անշուշտ թե որ այդ նախադասությունը չկար Թիրեաքյանի օրինակին մեջ»։

Բայց եկե՛ք տեսե՛ք, որ Թիրեաքյանի ձեռքի տակ ունեցած «Կուեստան»-ի յոթը տարբեր օրինակները՝ մեջը ըլլալով Սուտիի բնագիրը, ամենքն ալ կպարունակեն Թիրեաքյանին թարգմանած տողերը, որոնց պարսկերենն է՝ «Է՛կ դէր ֆօշթէն-ը ու սէլ-ը բի ֆաեղէ նէմուղհնղ», զոր ֆրանսացի Defremery-ն ալ թարգմանած է «et firent de vains efforts pour le tuer» բառերով։ Ուրեմն հարգելի Մինասյանին փութիւն քննադատությունը այս մասին ևս բացահայտորեն անճիշտ և անտեղի էր։

Գարծյալ կհարցնեմ, ի՞նչ բանի համար էր վերը հիշված իր «և այլն»-ը, որ կհետեւի (29)-ին—«նման հավելումներ առկա են նաև արձակ տողերում, ինչպես Մելիք-Վարդանյանի, այնպես էլ Թիրեաքյանի թարգմանության մեջ, որոնք բնավ չեն պատճառարանվում (Թիրեաք. թարգմ., էջ 208, 26, 29 և այլն)»։ «Եվ այլն»-ը ընթերցողին մտքին մեջ այն մոլորեցնող տպավորությունը կձգե, թե տակավին ուրիշ նման սխալներ ալ կան Թիրեաքյանի թարգմանության մեջ. ասիկա ո՛չ ուղիղ է և ո՛չ բնորոշելի։ Թող ներե ինձի տիկին Մինասյան ըսելու. թե խղճամիտ քննադատը պարտական է մեկ-մեկ ցույց տալու իր սխալ նկատածները կամ բնավ խոսքը չընել անոնց մասին լուրջաբան «և այլն»-ներով։

4. Մինասյանի քննադատած կետերն մեկն ալ հետևյալն է. «Կան նաև հակառակ դեպքեր՝ պարսկերեն կամ արաբերեն ամբողջ հատվածներ, նախադասություններ, քառյակներ ու տողեր չեն թարգմանված»։ Եվ կհիշեմ Մելիք-Վարդանյանի թարգմանությունն, ի մեջ այլոց 21-րդ էջի վրա 12 տող (առանց մեջ բերելու սակայն) ավելցնելով՝ «վերջինս բաց է թողել նաև Թիրևարյանը, մինչդեռ Աճառյանի մոտ կա»։ Տեսած չըլլալով Մելիք-Վարդանյանի և Աճառյանի թարգմանությունները, բնականորեն չեմ գիտեր, թե ո՞ր հատվածի մասին է խոսքը։ Այսքան միայն կհամարձակիմ ըսել՝ եթե Թիրևարյան դուրս է ձգած, պատճառ մը կա. հետաքրքիր եմ դիտնալու, թե ի՞նչ տողեր են, թե որ մեր պարսկագետ ընկերուհին հասնի իմացնելու։

Քննադատը ապա կավելցնե. «43-րդ էջում Մելիք-Վարդանյանը, ինչպես և Թիրևարյանը, չեն թարգմանել ղերվիշի պատասխանը բռնակալ Վորապետ Հեջլազ իրեն Յուսուֆին. «Եթե մեռնես ժողովուրդը քեզից կապտուլի և դու էլ մեղքերից»։ Թերևս նրանց ձեռքի տակ եղած պարսկերեն օրինակում ևս այս նախադասությունը արտագրումների ընթացքում դուրս է մնացել»։ Ահա՛ մտածելու ուղիղ կերպը, որ դժբախտաբար Մինասյան ի գործ չէր դրած քիչ վերը հիշված էջ 29-ի պարագային. այս կըսեմ, որովհետև իր ենթադրությունը ճիշտ է, քանի որ այդ նախադասությունը իրապես չկա Թիրևարյանի աչքի առջև ունեցած պարսկերեն օրինակներում։ Ասոնց ամենուն մեջ կկարդանք ղերվիշի հետևյալ պատասխանը՝ «Շատ բարի մաղթանք էր այս թե՛ քեզի և թե՛ մուսուլմաններու համար»։ Այդքան միայն։

Ի՞նչ փաստ ունի Մինասյանը ընդունելու համար, թե իր հիշած հատվածը հարադատ է. կարելի է նույնքան իրավունքով և ավելի մեծ հավանականությամբ ըսել՝ թե այդ տողերը ավելցված են «արտագրումների ընթացքում», այլ խոսքով՝ ընդմիջարկություն է և ըստ աճյմ կարգ մը օրինակների «դուրս մնացած» ըլլալու հարց չկա։ Միջանկյալ դիտել տամ, որ ո՛չ Դեֆրեսմերին և ո՛չ Իսովիկը ունին այդ խոսքերը, միայն Ջոն Փլատսի հրատարակած պրակ. բնագրին մեջ կտեսնվին անոնք (1874), իսկ թե անգլիացի թարգմանիչը ո՞ր կի առած է՝ հայտնի չէ ինծի։ Նույնպես չեմ գիտեր թե Մինասյան ի՞նչ օրինակի հետևած է, բայց սա որոշ է, թե մեծամասնությունը չունի ղերվիշի պատասխանին այդ հավելյալ, շինձու մասը։

5. Մինասյանի կտրուկ հայտարարություններն մեկն ալ հետևյալն է. «Զգալի թիվ են կազմում նաև առանձին բառերի սխալ թարգմանությունները»։ Եվ այդ «զգալի» թիվ կազմող «սխալ» բառերն մեկը մանրալին քննադատը հառաջ բերած է Թիրևարյանի թարգմանությունն, զոր ահավասիկ. «չէնան սէար Բէրդ բառերը Թիրևարյանը թարգմանել է «աթնպես զմայլեցուց», մինչդեռ պետք է լինի «հարրեցրեց», ինչպես թարգմանել է Մելիք-Վարդանյանը»։

Ո՛չ բնավ, տիկին Մինասյան, «զմայլեցուց»-ն ալ ճիշտ «հարրեցրեց»-ի իմաստը ունի այստեղ, որով պարսկերեն բառը սխալ չէ թարգմանված, ինչպես կկարծեք։ Հայտնի է, որ դուր «զմայլեցուց»-ը «հիացուց», «սքանչացուց» ըմբռնած եք, մինչդեռ «հաղեցուց, արրեցուց» մտքով դործածված է։ Թե որ հայերեն լեզվի բառարանները նայելիք՝ սխալ տեսնեիք, որ «զմայլիլ»-ի բուն նշանակությունը լի ու լի հաղենալ, կուշտ մը վայելել անուշ ըմպելիքը, զվարթանալ, արբենալ է։ «Զմայլել» բառի դիմաց Մալխասյան կուտա հետևյալը՝ «Է. Ուտելով լիանալ, հագնալու հաճույք զղալ։ 2. Մասնավորապես դինի խմելով զվարթանալ, խիստ լավ տրամադրություն ստանալ (զվարթանալը, խիստ լավ

առամադրությունը հառաջ կուգա, ինչպես հայտնի է, հարրած վիճակ—Մ. Թ.): 3. Մի հաճոյական բանով սաստիկ գրավվել, հիանալ, հրաշանալ, մայլել, մայիլ մնալ»։ «Հայկազյան» հոյակապ բառարանի համաձայն, դասական հայերենի մեջ «Զմայլիմ»-ի իմաստն է «վայելել առատապէս ի քաղցրութիւն ըմպելաց... լիանալ, լնուլ ցյագուրդ»։ Օր. «Ոչ կարացին զօրել ուժոյ զօրութեան անոյշ գինոյ նորա. ծարաւեցան, արբին եւ զմայլեցան» (Ագաթանգեղոս, Տփղիս, 1909, էջ 253), ուր որոշապէս կտեսնվի «զմայլիմ»-ի իմաստը որ է «զվարթանար», «արբենալ»։ Ի դեպ կարժե մատնանշել, թե Մեսրոպ վրդ. Մաքսուտյան «Կոլեստան»-ի հառաջարանի տողերը «Քէ էգ բույ-ը դէլավիզ-ը քօ մէսրէմ»-ը թարգմանած է այսպէս՝ «Որ հոտիցդ այսպէս սիրտս ըզմայլեցավ» («Անահիտ», 1904, թիվ 2, էջ 27)։ Իբրեւ վարդապետ եկեղեցւոյ, դասական հայերենի ծանոթ ըլլալը հայտնի է։ «Զմայլել»-ը «հարբենալ»-ի նշանակութեամբ գործածության ապացույց մը եւս կուտամ Թիրեաքյանի թարգմանութենէն (էջ 73)։ «Մինչդեռ եւ խոսքի գինիով զմայլած», որոնք պիտի. բնագիրն է՝ «մէն էգ ղէրար-ը սօխէն մէսր»։ Իսկ ուրիշ տեղ մը մէսրի բառը թարգմանած է «արբեցություն» (էջ 94). «Երիտասարդը արբեցության քունն գլուխը վեր վերցուց»։ Եւ այլուր (էջ 36) «վերին հարրածության մեջ կըսեր» պարսկ. սա բառերուն փոխարեն՝ «ղէր փայան-ը մէսրի միկօֆր»։

Այս բոլորէն կհետեւի ուրեմն, թե «առանձին բառերի սխալ թարգմանությունների» կարգին Մինասյանին կողմէ Թիրեաքյանին «զմայլեցուց»-ը դասելը թե՛ անտեղի եւ թե՛ անարդար է։

6. Նէխլընդ-ը Թիրեաքյան թարգմանած է «ծաղկաքաղ», իսկ Աճառյանը «ծաղկարար» բառ մը կերտեր է, զոր Մինասյան «ավելի հարմար» կգտնէ նէխլընդ-ի իմաստին. այդ անշուշտ իր գիտնալիքն է։ Սաղիւն իր մտքի պարտեզէն ծաղիկներ կբաղէ, կհրամցնէ զանոնք ընթերցողին, կսղմելով ծաղկաստան մը. որով գեղեցկորեն կպատշաճի «ծաղկաքաղ»-ը «Կոլեստան»-ի չեղինակին։

7. Ֆէլիկ բառը Թիրեաքյան թարգմանած է «օրենսդետ», զոր ուղիղ կգտնէ Մինասյան, բայց անմիջապէս հետո, չէս դիտեր ինչո՞ւ, կավելցնէ՝ «Ուրեմն ճիշտը «աստվածարան» թարգմանելն է»։ Ճիշտը այդ չէ, քանի որ աստվածաբանության հետ գործ չունինք այստեղ, այլ իսլամոթյան իրավագետի, օրենսգետի։

8. Մինասյան կգրէ՝ «Էնչ խոսք, որ բառերի մի մասը տեղի եւ իմաստի համաձայն թարգմանիչներն իրավունք ունեն փոխելու, ինչպէս վարվել են Մ. Վ.-ը եւ Հ. Թիրեաքյանը», որմէ եւս օրինակ մը կրէր իբրեւ թե պիտի. բնագիրն ռէֆիդ-ը փոխադրած է «դիտող» (պահապան) բառով՝ «Դուռ երգիք գոց եւ դիտողներ քուն»։ Այնպէս չէ, սակայն, այլ Թիրեաքյանին ձեռքի տակ եղած օրինակները, բացի մեկէն, ռէֆիդ կամ ավելի ճիշտ ռէֆիքան բառը ունին, որ «դիտողներ», «վերահսկիչներ» կնշանակէ, «surveillants» ըստ Defremery-ի։ Նույնը նաեւ մէսրին բառը, ըսված է, ըստ պատշաճության թարգմանել է Թիրեաքյանը «մյուսը»։ Այս ալ ճիշտ չէ, վասնզի թարգմանչին գործածած օրինակը մէսրին չըսեր, այլ վէյ (ան), զոր փոխարինած է «մյուսը» ամենամոտ բառով։

9. Բացատրելի վերջ, թե «Կոլեսթան»-ի թարգմանիչները պետք է հարկադրաբար մի շարք բառեր պահպանեն նույնությամբ եւ իրավամբ այդպէս էլ վարվել են («որոշ բառեր էլ թողել են նույնությամբ՝ պահպանելու համար

արևելյան ոճը, կոլորիտը, ինչպես էմիր, վեդիր, իմամ, մուեզզին, ևլն»), Մինասյան սա դիտողությունը կընե. «Բայց բառերի զգալի մասը, որ ոչ միայն կարելի էր թարգմանել, այլև անհրաժեշտ էր, չի թարգմանված, օրինակ, խաթիր (քարոզիչ), մոհթասեր (ոստիկան), զոլամ (ծառա), զազի (դատավոր), սադի (մատովակ), ջահել (երիտասարդ), գիլ (կավ), թեքիե (մենաստան), նշտարի (դեղ), նավազ (նավավար), նասրանի (քրիստոնյա), արաֆ (քավարան), քեշտի (նավ), մուսհաֆ (գուրան) և շատ ուրիշներ: Սրանք առկա են և՛ Մ. Վ.-ի, և՛ Թիրևաբյանի մոտ»:

Քննադատը թերացած է ցույց տալու, ինչպես շիտակ ըրած էր մինչև այսօր, թե վերի տ՛ր բառերը Թիրևաբյանի հաշվին պետք է աեցընել, նշանակելով էջերը, որպեսզի նախ հայտնի ըլլա այս իրողությունը, երկրորդ, և ավելի կարևորը՝ ժամանակ և հոգնություն խնայվի, եթե ոչ հետաքրքիրներու, դեթ դիտողություններուն դեմ պատասխանողին: Արդյոք տիկին Մինասյան չէ՞ր սպասեր, որ կրնար այդպիսի մեկը գտնվիլ աշխարհի մեկ անկյունը:

Երկար պրպտումներե ետք ինչ որ կրցա գտնել վերի բառերեն, հետևյալները կտեսնվին Թիրևաբյանի թարգմանության մեջ.

Ղազի, թարգմանված է և՛ «դատավոր» (էջ 78), և՛ «դատի» (էջ 158) ընդհանրացած արևմտահայոց մեջ. նույն բառը իր արարական ձևով ընդունած են նաև զրեթե բոլոր եվրոպական լեզուները: 'Իեֆրեմերին ևս թարգմանած է թե՛ cadhi և թե՛ juge: Բացե՛ք նաև Ստ. Մալխասյանցի Բառարանը այդ բառին տակ: Ուստի ամենևին առարկելի չէ «զազի» կամ «դատի»-ն, թե որ գործածելու լիվի:

Մուսհաֆ-ը պահված է նույնությամբ. «Կոլեստան»-ը յուսումնասիրողը բավական ծանոթ ըլլալու է մահմետական աշխարհին և անոր նվիրագործված անուններուն, որով հարկ չկա «Մուսհաֆ»-ը անպատճառ «Ղուրան» թարգմանելու, ըստ ինքյան կհասկցվի:

Նասրանի-ն («նազովրեցի» նշանակությամբ) արևելքի մեջ ծանոթ անուն է «քրիստոնյայի», այսուհանդերձ Թիրևաբյան ուշադիր եղած է փակագծի մեջ նշանակելու «քրիստոնյա» ևս:

Արաֆ-ը մահմետականներուն համար ճիշտ քրիստոնյաներուն «քավարան»-ը չէ, անոր մեկ տեսակն է դրախտի և դժոխքի սահմաններուն միջև: Ուստի ի՞նչ վնաս կամ անպատեհություն ունի նույնությամբ գործածել անորոշ կայան մը նշանակող արարերեն այդ բառը, ինչպես վարված է Թիրևաբյան:

Թէքեէ, դոր Թիրևաբյան գործածած է նույնությամբ՝ հատուկ է մահմետական մենակյացներուն, քիչ թե շատ քրիստոնյաներու մենաստանին նմանող: Այդ բառն ալ ընդհանրացած է արևելյան երկիրներու մեջ. նույնիսկ անգլերեն լեզուն յուրացուցած է դայն, հավանարար նաև ուրիշ օտար լեզուներ:

Խաթիր-ը թարգմանված է «աղոթասաց» և ոչ «քարոզիչ», ինչպես կմեկնե Մինասյան, թեև քարոզիչի հանդամանքն ալ կպահե, բայց առավելապես աղոթիչներ ըսողն է, ձայնով կարդացողն է մզկիթի մեջ:

Մեր լեզվի մեջ անցած «քաշտի»-ն պարսկերեն ճիշտ նույն բառն է՝ «նավ» նշանակությամբ (տե՛ս Մալխասյանի Բառարանը): Ստանալորի մը մեջ Թիրևաբյանին պետք էր «քաշտի»-ն («նավ» իմաստով) իրրե հանդ՝ առաջին տողի «կըշտին» բառին (էջ 3): Իսկ արձակ տողերու մեջ «քաշտի» բառը «նավ» կամ «նավակ» ու «նավավար» թարգմանած է (էջ 123, 124):

Պոլավ-ը տեղ մը թարգմանված կտեսնեմ «մանկավիհի», ինչ որ ճիշտ պարագային կհարմարի (էջ 90):

«Սաղի» (մատուցակ), «ջահել» (երիտասարդ), «գիլ» (կավ) բառերը, զոր չգտա, վստահարար իրենց համազոր հայերենով փոխադրված են:

Այս բացատրություններու լույսին տակ՝ այլևս ի՞նչ արժեք կներկայացնե Մինասյանի հայտարարությունը, թե «բառերի զգալի մասը, որ ոչ միայն կարելի էր թարգմանել, այլև անհրաժեշտ էր, չի թարգմանված: Չմոռնամ, որ այդ կարգի բառերուն ինչու՞մն վերջ կավելցնե «և շատ ուրիշներ» միտք պլուտոքոլ (սոսքը, նման իր «և այլն»-ներուն: Դարձյալ կկրկնեմ՝ ինքը իրեն քննադատ պարտական էր այդ «շատ ուրիշներ»-ը մեկ-մեկ ցույց տալ, կամ եթե չի կրնար՝ ընդունիլ, որ շատ ավելորդ և անտեղի էր ըսածը: Որպես հորս «Կոլեստան»-ի թարգմանության պատասխանատու հրատարակիչ՝ իրավունք տւնիմ, կարծեմ, սպասելու, որ մանրամասնորեն և լրիվ թվե հրապարակով իրեն սխալ երեցածները Թիրեաքյանի թարգմանության մեջ, որոնց վրայեն անցած է «և այլն», «և շատ ուրիշներ» ըսելով: Կցավիմ շեշտելու, որ լուրջ քննադատության մեջ անընդունելի է հեղինակի կամ թարգմանչի մը սխալներ վերադրել առանց այդ կարծեցյալ սխալները ցույց տալու: Այդպիսի ընթացք արդարության հակառակ է:

10. Հիմա գանք ուրիշ քննադատության մը, որուն համաձայն «բացթողնումներ» եղած են, իր բառով, «հատվածներու, քառյակներու, նաև ամբողջ հեքիաթներու»: Այո՛, եղած են և ցավելու տեղի չկա այդ հասկանումներուն համար, որոնք ամենափոքր չափով Սաադիի երկին արժեքը չեն նվազեցներ. ընդհակառակն, կհամարձակիմ ըսել՝ թե իր ստեղծագործությունը շահած է այնպիսի գեհնակ պատմություններու և հատվածներու մաքրումն: Իսկ ո՞վ կրնա երաշխավորել անոնց հարադատությունը:

Մինասյան ակնարկելով մի շարք երկրներում (և ոչ միայն Պարսկաստանում) տարածված արվամտության ակտին՝ «հեղինակի տեքստի աղավաղում» կնկատե, երբ հայ թարգմանիչը խենչ շեյխի, դավի կամ թագավորի սիրո առարկա պատանին աղջիկի փոխե, և կարծես կդժարանա հասկնալու պատճառը, երբ կըսե «թերևս պատշաճության համար»: Հասկա ինչի՞ համար պիտի ըլլար, հարգելի քննադատ: Նման բարբերու հատուկ անբարոյիկ երևույթները հայերեն լեզվով նույնությամբ պահպանելու մեջ առավելություն մը կամ արդարացում մը կա՞: Իսկ լավագույն չէ՞ խնայել հայ ականջներու, մանավանդ գեռատի ընթերցողներուն կամ ունկնդիրներուն: Շեշտակի կհարցնեմ՝ Մինասյան պիտի ուզե՞ր կամ համարձակե՞ր բարձրաձայն կարգալ հայ երիտասարդներու և կամ նույնիսկ տարեցներու խումբի մեջ «Կոլեստան»-ի սա մասերը օրինակ՝ 2-րդ գլուխէն 2-րդ Պատմ-ը, նույնն 9-րդ Պատմ-ը, Բ գլուխէն՝ 29-րդը, Դ գլուխէն՝ 13-րդի մեկ մասը և ուրիշներ:

Եվրոպացի թարգմանիչներ ալ, ոմանք ավելի, ոմանք պակաս թիվով դուրս ձգած են այդպիսի ոչ այնքան զուսպ նկարագրությամբ պատմություններ և տողեր: Անգլիացի Eastwick-ի բառերով «Some stories more suited to Oriental than European taste have been omitted»: Թիրեաքյան ևս բաց թողած է երեք փոքր պատմություններ ամբողջությամբ, ինչպես և որոշ չափազանց կոշտ մասեր՝ քանի մը հեքիաթներ, ընդամենը գրեթե 58 տող, մինչ «Կոլեստան»-ի իր օրինակը կրովանդակե 2950 տող մոտավորապես: Հաշվեցե՛ք համեմատությունը: Իսկ եթե Մինասյան կպնդե, որ նման «բացթողումներ» տեղի

ունենալու չէին և բնագրի ամեն մէկ տողը, ամեն մէկ բառը, հոգ չէ թե ո՞րքան մերկապարանոց և անպատշաճ, պահպելու էին, այն ատեն ինծի կմնա ըսել՝ «ճաշակի և բմբունութի» հարց է, A chacun son gout.

ПО ПОВОДУ ОДНОЙ КРИТИКИ

МИРДАТ ТИРЕАКЯН (Нью-Йорк)

(Р е з ю м е)

Статья является ответом на критические замечания А. М. Минасян в связи с переводом «Голестан»-а Саади на армянский язык, выполненным Арутюном Тиреакяном. Автор — сын покойного переводчика, — путем сравнения текстов отвергает большинство замечаний критика (см. «Историко-филологический журнал», 1962, № 3). В частности, он настаивает на том, что нельзя от переводчика требовать буквального перевода поэтического произведения, тем более такого классика персидской лирики, каким является Саади.